## 11. ՁԻՈՒ ՔՈՒՌԱԿ

Կէղնի, չէղնի մարդըմ ու կնիկըմ. ուրանց ավլատ ու թավլատ չէղնի։

Կնիկ օրըմ կէրթա հ'արտ, հաց կտանե իրկան, ճամբախ կծաովընա, ճամբու վրեն պրունճ տեխըմ անձրևու ջուր կէղնի. կգճի, կխմե, կէրկու հոգովնա։ Կէրկուհոգովնա, ժամանակ կիգա, կպառկի, ձիու մը քուռակ կբերե, կտանե կապե թավլեն։

Կկապե թավլեն, ժում ու ժամանակըմ կմնա, մոր կասե.—Ձիս կարգե։

Մերն է, կասե.— Զքզիկ ի՞նչպես կարգիմ, դու ձիու մը քուռակ իս, ո՞ր ախչիկ կիտա։

Քուռակ կասե.— Դու գնա հ'ուզե, քզիկ ի՞նչ լախա կա, էն լե ախքըտի ախչիկ չուզիս, թագավորի ախչիկ պիտի էրթաս հ'ուզիս։

Մերն է, կէլնի կէրթա զթագավորի ախչիկ կուզե։

Թագավոր լե, զէգ կնկա սիրտ չկոտրելու համար, կասե.— Գնա ձեռքըմ շոր բի, հրմալ ձեռքըմ էղնի, օր մարդու վրեն չէղնի, առ էկո, իտամ ցիմ ախչիկ։

Մեր կդառնա, կիգա տուն, կասե.— Տղա լաո, գացի հ'ուզի, թագավոր ասեց. «Գնա ձեռքըմ ծանդր շոր բի, առ ու գնա»։

Տղեն կասե.— Մերիկ, հ'ո՞րի կվախենաս, հ'ելի առ պարկըմ կորեկ, տար իմ մեղաց տեխ օր ջուր իս խմի, տար էն տեխ թափե, հանտե հավքեր կիգան, կուտեն, զուրանց թեփուրներ կթողեն։ Չէղնի զէն թեփուրներ ժողվիս։ Մեծ հավքըմ կա, կիգա, մեկ մեծ թեփուր կթողե, կվերցուս, կառնես կիգաս։

Մերն է, տղի ասածի պես էրեց, ղթեփուր բերեց։ Օր բերեց, տղեն ասաց.— Հ'ելի, առ զհալավն ու գնա։

Բերեց դրեց բողչի մեշ, զարկեց մոր հ'անթե տակ, մերն առավ ու քշեց թագավորի տիվան։

Թագավոր իշքեց հալվրներուն ու իշքեց ուր կնկա հ'երես, ասեց.— Վալլահի, տղեն զախչիկ տարավ։ Էլ ինչ հ'ուզինք, օր չկառնա բերե, զմեր յախեն ազատենք։

Կնկան ասեց.— Գնա, քու տղին ասա իմ քյոշկ ու սարի պես քյոշկ ու սարե մը թող շինե, զախչիկ կիտամ։

Մերն հ'ելավ գնաց, տղին ասեց։

Տղեն ասեց.— Հ'ելի, լից պարկըմ կորեկ, շալկե ու առ գնա իմ մեղաց տեխ։

Լցեց պարկըմ կորեկ, դրեց մոր շալակն ու ճամբեց գնաց։

Մերն առավ էկավ զկորեկ, ցրփնեց։ Էկան հավքեր թափան, կերան, թողեցին զուրանց թեփուր, հ'ելան գացին։ Մեր ժողվեց զէդ թեփուրներ, լցեց պարկ, առավ էկավ։

Տղեն բերեց զէդ թեփուրներ, շարեց վիրարու, խորոտիկ տուն հրուճիկըմ շինեց։

Լուսուն հ'ելավ թագավոր քնուց, տեսավ աղքատի տան տեխ քյոշկ ու սարե մը կաներ է, զուր քյոշկ ու սարեն բանցր է, շող լե զարկեր է ուր դիվնի մեջ։

Տղեն ասեց.— Դե հ'ելի գնա։

Մերն հ'ելավ էկավ թագավորի տուն, թագավոր տեսավ օր կնիկ էկավ։ Ասեց.— Բանըմ չըմ ասի, կիտամ, մենակ կուզիմ իմ տնեն քու տուն բաղչա տնկե, ճամբու էրկու դին քու տղեն, բլբուլներ ծառերու վրեն նստեն, կանչեն, օր իտամ զիմ ախչիկ, առնես, էրթաս։

Մերն հ'ելավ էկավ, տղին ասեց։ Տղեն ասեց.— Հ'ելի գնա էմ լե իմ մեղաց տեխ։

Մերն հ'ելավ, առավ պարկըմ կորեկ ու էկավ ցրփնեց գետին։ Հավքեր էկան, թափին զուրանց թեփուրներ, մեր ժողվեց ու առավ էկավ։

Բերեց, տվեց տղին։ Տղեն ասեց.— Տար զէդ թեփուրներ, ճամբու վրեն շարե, քանի մը հատ լե պարզե ճամբու օրթեն, թող արի։

Մեր, ինչ օր տղեն ասեց, էրեց։

Թագավոր լուսուն շուտ զարթավ, տեսավ օր հավքեր կկանչեն ուր դռան հ'առեջ։ Զգլուխ թալեց փանշարից դուրս, իշքեց, օր ուր դռան հ'առեջ բաղչե մը կա ու հ'ըմեն տեսակ հավքեր թառեր են վրը ծառերուն, կկանչեն։

Կնկան ասեց.— Վալլահի, զախչիկ տարան։

Պառավ հ՝ելավ լուսուն, մեկ լե բութ ու կրունկ քշեց թագավորի տուն։

Թագավոր ասեց.— Էլ ուրիշ ճար չկա, կիտամ՝ թըղ էրթա։

Տվեց զախչիկ, առան էկան։ Օր առան էկան, հ՝իրկուն էղավ պառկելու վախտ, ձին հ՝ելավ թավլից. էղավ հուրնեկ-հրեղեն տղե մը էկավ ախչկա խեչ պառկավ։

Ախչկան ասեց.— Ախչի, իշքե, ես ձիու մը քուռակ իմ, թավլեն կապուկ իմ, հ՝իրկըվնե հ՝իրկուն կէղնիմ հրեղեն տղե մը, կիգամ քու խեչ պառկիմ, ցերեկ մեկ լե կէղնիմ ձի, չէղնի մարդու ասիս, օր ասիս, քու ձեռքեն կէլնիմ, էլ չըս կառնա զիս գտնաս։

Կմնա ժում ժամանակըմ, ախչկա մեր կասե. «Կանի հ՝ելնիմ էրթամ, տեսնամ իմ ախչիկ իմա՞լ էղավ, տվինք պառավըմ տարավ, չհարցուցինք, չփորձինք»։

Մերն հ՝ելավ էկավ ախչկան տեսության։ Էկավ, մնաց հար հ՝իրկուն, փեսեն չէկավ բարովեց։ Ասեց ախչկան.— Ախչի, քու էրիկ հ՝ու՞ր է, իսկի չէկավ, հալենք չէլավ։

Ախչիկն ասեց.—Ցերեկներ կէրթա աշխատի, հ՝իրկըվներ կիգա տուն։

Զոքանչն է, նստավ, նստավ, տեսավ փեսեն չէկավ, հ՝ելավ գնաց պառկավ։

Հ՝էնօր հ՝ընցուց։

Հ՝ելավ առտըվանց, մեկ լե չտեսավ, հ՝ընկավ ախչկա քռի հետ, քնքնեց, ասեց.— Ախչի, քու էրիկ քո՞ռ է, քաշա՞լ է, իմ հալենք չէլնի էդա էրկու օր հ՝ոդա իմ, ներս չի գա։

Ախչկա ճար կտրավ, ասեց.— Իմ մարդ օղորդ ձի է, հ՝իրկըվներ կհանե ղձիյվենին, կէղնի հուրնիկ-հրեղեն տղե մը, կիգա իմ խեչ կպառկի։

Մերն ասեց.— Հ՝ու՞ր կդնե գէդ ձիյվենին, օր կհանե։

Ախչիկն ասեց.— Բուխերիկ կդնե։

Զոքանչն ասեց.— Զըտ կըռնա՞ էրի։

Ախչիկն անկաճ էրեց, ասեց.—Վալլահի, պիտի գիմ մոր խոսք էնեմ, հ՝էսօր թալիմ կրակ, էրիմ, տեսնա զուր փեսեն, էլ՝ մարախ չէնե։

Տղեն է, հ՝իրկուն օր էղավ, էկավ հանեց ղձիյվենին, դրեց բուխերիկն ու պառկավ քնավ։ Օր էղավ կեսգիշեր, ախչիկ հ՝ելավ, բերեց ղէրկա ձիյվենի հալավ, թալեց կրակ։ Տղեն զհոտն առավ, հ՝ելավ նստավ ասեց.— Թագավորի ախչիկ, էդ ի՞նչ կէնիս։

Կնիկն ասեց.— Շոր ու մոր է, հ՝ընկեր է կրակ, հոտ կիգա։

Տղեն չավդրցավ, հ՝իմցավ, օր ուր ձիյվենին է, կվառի։ Էղավ էղրվնիկըմ, թռավ նստավ վըր փանջարի շըշեն, ասեց.—Թագավորի ախ-

չիկ, էրկրթե սոլ հագնես, փողպրտե գավազան առնես հ'ուր օրթե ծակավ, հ'ոնի զիս գտնաս։

Ասեց ու թռավ գնաց։

Ախչիկն է, զէգ օր տեսավ, խելք գնաց, ուշաթափ էղավ, գեժտանգեժ հ'իմցավ. տեսավ օր իրիկ չկա։ Հ'ելավ լուսուն, ուրեն խուրճի մը օսկի լցեց, առավ ջուխտըմ էրկրթե սոլ հագավ, ու փողպրտե գավազան մը ու հ'ընկավ ճամբախ։

Ախչիկ գնաց, շատ գնաց, քիչ գնաց, վիրնե օր հարցուց, սալրխըմ չառավ, ճար կտրավ, սովք էր, գնաց բանձր սարու մը գլուխ գրեց, գնեց ցորեն, էրեց հաց, ու ցըրվեց էկող-գացողին, բալքիմ սալրխըմ առնե։

Ախչիկ թրխ մնա հոդ, մենք դառնանք ուրիշ տեխ։

էն մեկ օր հալվորըմ ու ուր տղեն էկան ցորենի, լսած են, օր էդ տեխ ցուրեն կա ծախու։ էկան հ'աղբրի խեչ նստան, հալվորն անոթի էր, տղեն քիչըմ կանաչ-մանաչ քաղեց, բերեց լցեց հ'առեջ, կերավ ու պառկավ քնավ։ Տղեն նստավ, հ'աղբրի հ'առեջ ջուխտըմ մեծ քար կեր, տեսավ օր էդ քարեր բացվան, ջուխտըմ կուկում դուրս հ'ելան, լցեց ջուր, էդ էր, կդառներ, տղեն զինկ թալեց վըր կուկումներուն, գնաց ներս։

Գնաց մտավ, տեսավ իրեկ հատ հ'օգա, իրեկ խահվի ջավզա, լիք խահվով, իրեկ խույլան լե կշտի հետ ուրանց, նստավ ու զուր խահվեն խմեց։ Ըզվոր մեկն խմեց, լցվավ, դարդակ չմնաց։ Հ'ելավ գնաց ուրիշ հոդե մը, տեսավ իրեկ լանկառի դրուկ էր, մեջ փլավ, վրեն լե մեկ-մեկ էղվընիկ։ Ինչ խըտար կերավ ու խոսեց, տեխ թաժա լըցվավ։ Տղեն կուշտ կերավ, քիչըմ փլավ լե լըցեց լոշերու մեջ, ասեց՝ տանեմ իմ հոր։

Հ'ելավ էկավ օր հ'ելներ դուրս, շարխ չդառցավ։ Պատրվտավ մեկ քունճ, ասեց. «Ախբր էդի չենլրկ է, մեկ լե կիգան, կէլնեն դուրս. եր էկան հ'ելան դուրս, կթալեմ զիս, կէլնեմ դուրս»։

Հ'իրկուն օր էլավ, տղեն խբսլի հ'ետևեն կիշքեր, տեսավ օր իրեկ հատ էղվընիկ հ'իշան, հանեցին զուրանց էղվընիկե հալվըներ, էղան հուրնի-հրեղեն, էկան նստան։ Բերին զուրանց լանկառի փըլավներ, կերան, ղխահվեկ խմեցին, խըլրսան։

Ջոչ ախբերն ասեց.— Ախբեր, քանի օր պիտեր, դու պետկ չէր կարգվեր, մտներ մեղաց տակ, օր կարդվար, առար զթագավորի ախչիկ, պետկ չէր թողեր հ'իգեր. էդա յոթ տարի է թողեր իս էկի, էնի հ'ելեր է հ'նկեր է քու հ'ետև. աղեկ չէ, էկո դառցի գնա։

Ախբերն ասեց.— Ջանըմ, ձրզիկ էլ ուրիշ մժլելիկ չկա՞, զէդոր թարկ տվեք։

Փոխեցին զուրանց խոսք, ուրիշ բան կխոսեն։ էն գահ օր բացվեր էր շարխ, մեկ լե էն գահ շարխ բացվավ, կոսկոմներ էկան, կէլնեն դուրս, տղեն թալեց զինկ կուկումի վրեն, հ'ելավ դուրս։ Տեսավ օր ուր հեր մեկ

լե հ՝ոնի քնուկ է։ Հ՝իմցուց հոր, քիչըմ միս ու փլավ տվեց, կերավ, խվաթ էկավ շոքեր, հ՝ելան հ՝ընկան ճամբախ, էկան։

Էկան, էկան, հասան էդ ախչկա ամբրի խեչ, օր ցորեն կծախեր։ Էկան օր ցորեն առնեն, ախչիկն հարցուց, ասեց.— Կյալո, դուք էդ խըտար ճամբախ էկաք, ձըզիկ բան հ՝ռաստ չէ՞կավ։

Տղեն ասեց.— Կանի, քզիկ պատմեմ։

— Ասաց.— Հ՝երեկ էկանք ես ու իմ հեր հ՝աղբրի մը մոտ նստանք։ Նստանք, իմ հեր անոթի էր, հ՝ելա քիչըմ կանաչ-մանաչ բաղի, բերի լցի իմ հոր հ՝առեջ, կերավ, կշտացավ ու պառկավ քնավ։ Ես նստա իշքեցի, տեսա, օր մեծ քարըմ կեր հ՝աղբրի հ՝առեջ, զէն տեսա, քար բացվավ ու էրկու կուկում հ՝ելան դուրս։ Լըցվավ ջուր, էդ էր զկուկումներ կքաշեն, զիս թալեցի վըր կուկումներուն, գացի մտա ներս։ Գացի ներս, տեսա օր իրեկ հատ հ՝օդա կեր հ՝ոդի, տեսա իրեկ ջավզա դրուկ էր, իրեկ ըստական ու իրեկ չըբուխ կշտի հետ, ինչ խըտար լցի ընծիկ խահվա, խմի, էմ լե տեխ լըցվավ։ Սորա հ՝ելա օլըրտա, գացի մեկէլ հ՝օգեն, տեսա սուֆրեն պարզուկ է, իրեկ լանկառի դրուկ, փըլավ մեջ, մեկ-մեկ էղվընիկ լե վրեն, ասի՝ կանի հըմեն անոթի իմ, կուշտ ուտիմ, սորա քանի օր կերա, տեխ լցվավ։

Տղեն օր զէդ կասեր, ախչկա սիրտ պըտ-պըտ կթալեր. «Տղա, լաո, ասե, ասե, քզիկ ցորեն շատ կիտամ»։

— Է,— ախչիկ կասե,— դը ժըղլի տեսնանք։

— Օր կուշտ զիմ փոր լցի, քիչըմ լե լցի հացերու մեջ, կապի իմ մեջք, ասի՝ տանեմ իմ հոր։ Կուշտ կերա, հ՝ելա օր հ՝իգենք, ճար ու ճամբախ չգտա, ասի՝ ախբր էդի ջենլըկ է, կանի իշքեմ հար դուռ բացվի, դռան հ՝ետև խըսիլըմ կեր, պըլուլվա ինկ ու կանա։

Տղեն օր զուր մժուլեն, կէներ, ախչիկ վիսա կիշքեր ուր սոլերուն ու գավազանին, հըմա-հըմա օր ծակվելու էր.— Դը ասե, դը ասե, քզիկ հաց շատ կիտամ,— ասեց ախչիկն։

— Ես պատրվտա, տեսա օր հ՝իբկուն էղավ, իրեկ հատ էղվընիկ փանջարից մտան ներս։ Մտան ներս, հանեցին զուրանց էղվընիկե հալվըներ, դրին վըր քուռուն, էղան մեկ-մեկ հուրնի-հրեղեն ու նստան, կերան զուրանց հաց, խմեցին զուրանց խահվեն ու առան չըբուխ օր կքաշեն, մեծ ախբերն վերուց ասեց. «Օր գու կկարգվեր, թագավորի ախչիկ կբերեր, էլ հ՝որի՞ կփախներ, հ՝իդեր մտներ հ՝ոդա, էդա յոթ տարի էկեր իս, նը թուղթըմ, նը ճուհաբըմ չըս ճանբի, մեղք է, խեղճ է, էտ լե թագավորի մը ախչիկ է»։ Պզտիկ ախբերն վերուց ասեց. «Զիս օր կսիրեք, իմ հ՝առեջ կնկա բաս մ՝ էնեք, էկեր իմ էդա տեխ, հ՝իրարու հետ կզարկինք ու զարկվինք, տեսնանք հար իմալ կէղնի»։

Տղեն օր հըմալ ասեց, մեկել էրկուք ծիծղացին ու փոխեցին ուրիշ

մուլի ու պառկան քնան։ Ես լե մանցի հար լուս խրսրլի մեջ։ Էդոնք լուսմութ հ'ելան, զուրանց խահվեն խմին, զհաց կերան, հանեցին զմարգանակ հալավ, դրին վրը քուռսուն, հագան զեղրվնրկե հալվրներ ու ֆը՞ռ, թռան փանջարից, գացին։ Զէդ ասեմ քզիկ, օր զէդոնց կերակուրն ու խահվեն էդ չարխն է կէփե, օր դրուկ է հ'ոդի։ Էդոնք օր գացին, հ'ելա հա էն, հա էն հ'օդեն օլրրտա, քրրբես կպատռիմ ու ճար չկա, օր հ'ելնեմ դուրս։ Ինչ զգլուխդ ցավցում, հար կեսավուր բաքլամիշ էրի, տեսա օր էրկու կուկում էկան։ Չարխ դառցավ, թալի զիս վրը կուկումներուն, հ'ելա դուրս։ Էկա, տեսա օր, իմ հեր դրռ քնուկ է. զարթեցուցի, տվի ուրեն փլավ ու հաց, կերավ ու հ'ելանք առանք զիրար, էկանք։ Ակյար չրս ավտրնա, էն փլավից ու էղրվնրկի մրսից դրռ կա իմ մոտ, կապուկ է պառեկս։

Հարձկեց տվեց ախչրկան։

Ախչիկն օր զփլավ ու զէզրվնրկու միս տեսավ, ուշք գնաց, հ'ընկավ գետին։ Բերին ջուր լցին քիթն ու բերնի վրեն, զարթավ։ Օր զարթավ, հ'ելավ, ասեց.—Տղա, դու զէն տեխ գինա՞ս։

Տղեն ասեց.— Հ'որի՞ չէ, քելե էրթանք, ցուցում։

Ախչիկն ասեց.— Ահտ ու խրատ էղնի, օր դու զէն տեխ ընծիկ նշանց խտաս, զէդա ամբար ցորեն կիտամ քզիկ։

Կառնե զախչիկն, կիգա հ'աղբրի մոտ։ Օր կիգա հ'աղբրի մոտ, հրմ սոլեր կծակի, հրմ գավազան կկոտրի։

Ախչիկ կասե.— Ալավոկի գտա։

Կեսօր կէղնի։ Մեկ լե կիշքե, քար լրխրոթաց, ծակ բացվավ, էրկու կուկում ու չարխ հ'ելան դուրս։

Օր հ'ելան դուրս, ախչիկն հանեց զուր ամբրրի բալնիկներ, տվեց տղին, ասեց.— Դը դու գնա, ես գինամ ու չարխ։

Տղեն օր գնաց, ախչիկն զինք թալեց վրը չարխին ու դուս գնաց ներս։ Ախչիկ գնաց տեսավ, օր տղի ասածի իրեկ ճավզա կա էդ տեխ ու իրեկ ֆընջան, լցեց իրեկեն լե խմեց, էն էրկուսեն ինչքան խմեց, լցվավ, էն մեկելից օր խմեց, չրլցվավ. ախչիկն ուր մտկի մեջ ջփոթավ։ Հ'ելավ գնաց մեկել հ'օդեկ լե օլրրտավ, տեսավ սուֆրեն փռուկ է, իրեկ լանկառի լիկ փլավ կա դրուկ էդ տեխ ու վրեն մեկ-մեկ էղվրնեկ, իրեկեն լե կերավ։ Էն էրկուսից ինչ խրդար կերավ, լրցվավ, էն մեկելից օր կերավ, խոռավ, էլ չլցվավ։ Ախչիկ հոդ լե մարախ էրեց ու մնաց ուր մարախի մեջ։

Էղավ հ'իրկուն էղվրնիկներու գալու վախտ ախչիկ հ'ելավ պրլուլվավ խրսիլ, կանավ դռան հ'ետև։ Օր կանավ գռան հ'ետև, տղի ասածի պես, տեսավ օր իրեկ էղվրնիկ, ֆը՞ռ, փանջարից մտան ներս։ Մտան ներս,

հանեցին զուրանց էղվընիկե հալվրներ, հագան մարգանակ հալավ, լվացվան ու էկան նստան, օր զուրանց խահվեն խմեն։

Էկան ամեկ վըր ուր շավզեն խմեց, տղեն իշքեց օր ուր խահվի շավզեն կիսատ է, սիրտ շփոթավ, ասեց.— Վալլահի, թագավորի ախչիկ էկեր է, զիս գտեր է։

Գացին վըր փլավին, ախբըրտանք նստան, օր զուրանց փլավ կուտեն։ Տղեն տեսավ, ուր փլավի լանկառեն թամ խոռեր է, ասաց.— Ալավակի թագավորի ախչիկ էկեր է։

Էրեց օր դառներ հետ, հագներ զուր էղվընկա շորերն ու թրոներ, թագավորի ախչիկ հ'ելավ խըսլի մեշեն, գնաց, զինք թալեց էրկու տեգեր օտաց։ Օր թալեց օտաց ու ընգոնք զախչիկ տեսան, հ'ելան տղի ձեռքեն զէղրվնրկու հալվրներ առան, պահեցին, շթողեցին, օր էրթեր։

Նոր բերին էրկու-իրեկ օր լե պահվրտին զուրանց ախբըրկին, բերին փառկով ու ճրհեզով դրին զուրանց ախբեր ու ախբըրկին ճամբեն, էկան։

Էնդոնք հասան ուրանց մուրազին, դուք լե հասնեք ձըր մուրազին։